Արմինե
ՏԻԳՐԱՆՅԱՆ

«Ամբերդ» հետազոտական
կենտրոնի կրտսեր
գիտաշխատող

2013-2015 թթ. սովորել և ավարտել է ԵՊՀ «Մշակութաբանություն» մասնագիտության մագիստրատուրան, իսկ 2016-2020 թթ.՝ ասպիրանտուրան: 2020 թ. վերապատրաստվել է Իտալիայի Ալմա Մատեր համալսարանում և ՀՀ ROCHEMP կենտրոնում՝ որպես մշակութային ժառանգության միջազգային փորձագետ:

ԱՄՆ Կոնգրեսի միջազգային առաջնորդության «Open world»՝ մշակութային ժառանգության պահպանության ծրագրի 2024 թ. շրջանավարտ է (Վաշինգտոն, Սանտա Ֆե):

2024 թվականից «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կրտսեր հետազոտող է:

Ներկայում մասնակցում է միջազգային վերապատրաստման ծրագրի՝ աշխարհի 14 փորձագետների շարքում: ԱՄՆ-ի Մասսաչուսեթսի «The National Association for Armenian Studies and Research» հայագիտական հետազոտական ծրագրի 2022 և 2023 թթ. և «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամի հայագիտական հետազոտական ծրագրերի 2023 թ. հաղթողն է:

Հեղինակ է մի շարք գիտական հոդվածների և գրքերի:

https://orcid.org/0000-0001-5886-3667

ԱՐՑԱԽԻ ԱՆՀԵՏԱՑՈՂ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼՈՒՌ ԱՇԽԱՐՀԸ

DOI: 10.52174/2579-2989_2024.4-94

Հիմնաբառեր. *Արցախ, միջազգային կառույցներ, մշակութային ժառանգության ոչնչացում, Ադրբեջանի պետական քաղաքականություն, Եվրոպայի խորհուրդ, ՅՈՒՆԵՍԿՕ, Հաագայի արդարադատության միջազգային դատարան*

21-րդ դարում, երբ առաջադեմ աշխարհը հանդուրժողականության և մշակութային բազմազանության նկատմամբ հարգանք է քարոզում և իր գրավոր փաստաթղթերում հորդորում պետություններին հարգել յուրաքանչյուր ժողովրդի մշակութային ժառանգությունը, Ադրբեջանը շարունակում է աշխարհից ջնջել համամարդկային նշանակության բազմաթիվ արժեքներ Արցախում՝ աղքատացնելով մոլորակի մշակութային բազմազանությունը: Սկսած 2020 թվականի ռազմական գործողություններից և չդադարելով վերջին 4 տարիների ընթացքում՝ հայկական բազմաթիվ եկեղեցիներ, պատմական գերեզմանոցներ, խաչքարեր ու հուշարձաններ համակարգված կերպով ոչնչացվել են Ադրբեջանի կողմից:

Հոդվածում ներկայացվում է միջազգային հանրության արձագանքն Արցախի մշակութային ժառանգության ոչնչացման և յուրացման՝ Ադրբեջանի պետական քաղաքականությանը՝ 2020 թվականի պատերազմից հետո մինչ մեր օրերը: Այստեղ վերլուծվում և քննվում են Ադրբեջանի հարձակողական գործողություններին անդրադարձող, դրանք դատապարտող և հայկական ժառանգության պաշտպանությանը միտված միջազգային բանաձևեր, հռչակագրեր, խորհրդարանական և դատական որոշումներ՝ գնահատելով դրանց ազդեցությունն ու նշանակությունն Արցախի պատմամշակութային արժեքների պահպանման և ոչնչացումը կանխելու գործում: Վերլուծությունը ցույց է տվել, որ թեև միջազգային շատ դերակատարներ ցանկացել են կանխել վանդալիզմի այս ընթացքը՝ Ադրբեջանի գործողություններին կոշտ գնահատականներ տալով, այնուամենայնիվ, գերակա լռությամբ և գործնական քայլերի բացակայությամբ անուղղակիորեն «խրախուսել» են այս վարքագիծը՝ տեղիք տալով ցեղասպանական նոր գործողությունների:

Ներածություն: Ադրբեջանն իր կազմավորումից ի վեր (1918 թ.) վարել է հակահայ պետական քաղաքականություն[1], իսկ պատմական հետքերի վերացումն Արցախում եղել և շարունակում է մնալ նրա գործելակերպի անբաժան մասը:

2020 թ. սեպտեմբերի 27-ին պատերազմը սկսվեց Արցախի Հանրապետության տարածքում միջազգային մարդասիրական իրավունքի կոպտագույն խախտումներով՝ ադրբեջանական ծանր զենքերով կրակի տակ թողնելով քաղաքացիական բնակավայրերը, կրթական ու մշակութային կենտրոնները: Վնասվեցին Արցախի թանգարաններն ու մի շարք հավաքածուներ, բազմաթիվ խաչքարեր, հուշարձաններ ու մշակութային կառույցներ: Հրթիռակոծվեցին Շուշիի՝ 19-րդ դարի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցին, մշակույթի տունը, Տիգրանակերտի հնագիտական ճամբարը, Ստեփանակերտի երաժշտական դպրոցը և մշակութային այլ կառույցներ: Հիմնահատակ ոչնչացվեցին նաև Ջեբրայիլ (Մեխակավան) բնակավայրում Զորավոր Սուրբ Աստվածածին, Մոխրենես գյուղի Սուրբ Սարգիս, Կանաչ ժամ՝ Սուրբ Հովհաննես Մկրտիչ և Բերձորի Սուրբ Համբարձում եկեղեցիները[2]: Արցախի ամբողջական հայաթափումից հետո՝ արդեն 2023 թվականին, Ադրբեջանն աղբակույտի վերածեց 1838 թվականին կառուցված Շուշիի Մեղրեցոց Սուրբ Աստվածածին եկեղեցու պատմական շերտերը, հեռացրեց Վանքասարի 7-րդ դարի եկեղեցու խաչը, տապալեց Ստեփանակերտի մետաղյա խաչը, ոչնչացրեց Ծարի Սուրբ Սարգիս և Սուրբ Գրիգոր միջնադարյան եկեղեցիների եզակի արձանագրությունները, քերեց խաչաքանդակները:

Եկեղեցիներից զատ, ոչնչացվեցին Հադրութի շրջանի Առաքել գյուղի, քաղաքի ազատամարտիկների հուշահամալիրի, ինչպես նաև Լաչինի պատմական գերեզմանոցի 15-16-րդ, Շուշիի հայ-հունական հին գերեզմանոցի՝ 12-13-րդ դարերով թվագրվող խաչքարերը: Ավերվեցին նաև Արցախի Հադրութի շրջանի Ուխտաձորի և Որոտան քաղաքի Արցախյան ազատամարտին նվիրված խաչքարերը: Կավաքավանք եկեղեցու տարածքից անհետացավ դեռևս 1995 թվականին տեղադրված խաչքարը: Իսկ արդեն 2024 թվականին Մարտակերտում ոչնչացվեցին Սիմոնի աղբյուրի և Քաշաթաղի Աղանուս գյուղի հուշարձան-խաչքարերը:

Ադրբեջանի կողմից ոչնչացվեցին Հադրութի ակնառու ազատամարտիկների, Շուշիի՝ Հայոց ցեղասպանության, Արցախյան ազատամարտի և Հայրենական պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրները: Ավերվեցին Հադրութի շրջանի Մեծ Թաղերում Արմենակ Խանփերյանցի (Սերգեյ Խուդյակով), իսկ Շուշիում՝ ԽՍՀՄ պետական-քաղաքական գործիչ, շուշեցի Հովհաննես (Իվան) Թևոսյանի կիսանդրիները: Բացի այդ, վանդալիզմի և ոչնչացման ենթարկվեց սպարապետ Վազգեն Սարգսյանի արձանը: Ստեփանակերտում ոչնչացվեցին Ալեքսանդր Մյասնիկյանի արձանը, Արցախի հերոս Աշոտ Ղուլյանի հուշաքարը, Ստեփան Շահումյանի բրոնզաձույլ արձանը, Անատոլի Զինևիչի կիսանդրին, Ստեփանակերտի վերին զբոսայգում գտնվող Արծվի հուշարձանը, Հայ-ֆրանսիական պուրակում գտնվող Շառլ Ազնավուրի արձանը և Ստեփանակերտի դրամատիկական թատրոնի մուտքի մոտ տեղակայված՝ Վահրամ Փափազյանի կիսանդրին[3]:

Պատմական հետքի վերացման նպատակով ոչնչացվել են Շուշիի, ինչպես նաև Ասկերանի շրջանի Շոշ համայնքի, Սղնախի, Լաչինի, Հադրութի գերեզմանոցները, Ստեփանակերտի զինվորական պանթեոնը: Հիմնահատակ ավերվել են նաև գյուղեր ու քաղաքներ, այդ թվում՝ Մոխրենես և Քարինտակ գյուղերը:

Ադրբեջանը ոչնչացրել է Շուշիի կերպարվեստի պետական թանգարանին կից

[1] Ժամակոչյան Ա., Աթանեսյան Ա., Հարությունյան Գ. և այլք, Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը, Եր., «Նորավանք» ԳԿՀ, 2009, էջ 21, http://www.noravank.am/upload/pdf/book.pdf

[2] Տիգրանյան Ա, Արցախի մշակութային ժառանգությունը. պաշտպանության մեխանիզմները ժառանգության պաշտպանության միջազգային համակարգում, «Վէմ» մատենաշար, Թիվ 7, 2023, էջ 165

[3] Tigranyan A., EVN Report, 01.October, 2024, https://evnreport.com/spotlight-karabakh/destruction-of-armenian-cultural-heritage-of-artsakh/

«Քանդակների պուրակում» տեղակայված 51 քանդակ, վնասել ու քանդել Շուշիի Գրիգորի Գաբրիելյանցի անվան երկրաբանության պետական թանգարանը, պայթեցրել Հադրութի Ավետիք Իսահակյանի անվան գրադարանը, քանդել Արցախի Ազգային ժողովի շենքը և այլ շինություններ: Յուրացման փորձերով պղծվել և աղվանական են հռչակվել Դադիվանքը, Հադրութի Սուրբ Խաչ վանքը, Ծակուռիի 12-րդ դարի Սուրբ Աստվածածին, Մատաղիսի Սուրբ Եղիշե, Տողի Սուրբ Հովհաննես, Ծիծեռնավանքի եկեղեցիները, 4-րդ դարով թվագրվող Ամարասի վանքը, Գանձասարը և այլ եկեղեցիներ:

2023 թվականի աշնանը 120.000 արցախահայերի բռնի տեղահանությամբ կասեցվել է Արցախի հուշարձանների հետ հետագա հաղորդակցումը, խաթարվել Արցախի մշակութային կյանքը:

1. Միջազգային հանրության արձագանքն Արցախի մշակութային արժեքների ոչնչացմանը՝ 44-օրյա պատերազմի ժամանակ և դրանից հետո

2020 թվականի սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 9 ընկած ժամանակահատվածում միջազգային միջկառավարական (ՄԱԿ, ԵՄ, ԵԽ, ԵԱՀԿ, ՆԱՏՕ, ՀԱՊԿ) ու հասարակական կազմակերպությունները[4] համապատասխան գնահատական չէին տալիս Ադրբեջանի հստակ ընդգծված մշակութասպան քաղաքականության ակնհայտ դրսևորումներին և բավարարվում էին երկու կողմերին ուղղված զսպվածության, ուժի կիրառումից զերծ մնալու կոչերով: ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը 2020 թ. հոկտեմբերի 8-ին և 19-ին 2 նիստ է գումարել՝ անդրադառնալով հակամարտությանը, բայց այդպես էլ որևէ բանաձև չի ընդունել:

2020 թ. ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի՝ հոկտեմբերի 5-ի հայտարարության համաձայն[5], Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում բռնության շարունակական սրման, դպրոցների, մշակութային և կրոնական վայրերի թիրախավորման առնչությամբ հոկտեմբերի 10-ին ընդգծված չեզոքությամբ հանդես եկավ ՅՈՒՆԵՍԿՕ-ն՝ համաշխարհային մշակութային ժառանգության պաշտպանության ՄԱԿ-ի կողմից մանդատ ունեցող կառույցը՝ երկու կողմերին կոչ անելով պաշտպանել տարածաշրջանի ժառանգությունը[6]: Իհարկե, հայտարարության տեքստից չէին կարող անմասն մնալ Ադրբեջանի կողմից բազմիցս ակնհայտորեն խախտված (ինչն այդպես էլ համապատասխան արձագանք չստացավ)՝ Հաագայի 1954 թ. կոնվենցիայի և դրա առաջին ու երկրորդ արձանագրությունների (1954 թ. և 1999 թ.) դրույթների հարգման հորդորները:

44-օրյա պատերազմի ավարտն ամրագրվեց նոյեմբերի 9-ին՝ ԱՀ նախագահի, ՀՀ վարչապետի ու ՌԴ նախագահի միջև հրադադարի մասին համաձայնագրի ստորագրմամբ, որից հետո ոչ միայն չդադարեց, այլև նոր թափ ստացավ հայկական մշակութային արժեքների ոչնչացումն արդեն Արցախի բռնազավթված տարածքներում:

2020 թ. նոյեմբերի 20-ին իր թվիթերյան էջում Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը հայտարարեց, որ Ֆրանսիան պատրաստ է ՅՈՒՆԵՍԿՕ-ի և հակամարտությունների ժամանակ ժառանգության պաշտպանության դաշինքի միջոցով տրամադրել իր փորձն ու աջակցությունը ժառանգության պաշտպանությանը[7]: Նույն օրը ՅՈՒՆԵՍԿՕ-ն՝ «ժառանգությունը վտանգված է» ազդակով, վերա-

[4] Պատերազմի ժամանակ ԼՂ տարածաշրջանի մշակութային ժառանգության պաշտպանության մասին հայտարարություններով հանդես եկան ԻԿՕՄ-ի Հայաստանի գրասենյակը, ԻԿՕՄ միջազգային կազմակերպությունը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջազգային խորհրդատվական մարմին հանդիսացող «Կապույտ վահանը», ՅՈՒՆԵՍԿՕ-ն, Մետրոպոլիտեն թանգարանը, ԻԿՕՄՕՍ-ը, «Եվրոպա Նոստրան» և այլ կազմակերպություններ:

[5] Dujarric S., Statement attributable to the Spokesman for the Secretary-General on the Nagorno-Karabakh conflict, https://www.un.org/sg/en/content/sg/statement/2023-08-02/statement-attributable-the-spokesperson-for-the-secretary-general-the-lachin-corridor-armenia-azerbaijan%C2%A0#:~:text=St%C3%A9phane%20Dujarric%2C%20Spokesman%20for%20the%20Secretary%2DGeneral&text=He%20urges%20both%20parties%20to,and%20security%20in%20the%20region.

[6] Situation in the Nagorno-Karabakh conflict zone UNESCO statement, "UNESCO", 09 October 2020, https://en.unesco.org/news/situation-nagorno-karabakh-conflict-zone-unesco-statement

[7] Ֆրանսիան պատրաստ է լիակատար աջակցել ԼՂ մշակութային և կրոնական ժառանգության պաշտպանությանը. Մակրոն, «Արմենպրես», 20 նոյեմբերի 2020, https://armenpress.am/eng/news/1035424.html

հաստատեց Լեռնային Ղարաբաղի մշակութային արժեքները պաշտպանելու պարտավորությունը՝ մշակութային ժառանգության հաշվառման նպատակով առաջարկելով առաքելություն ուղարկել տարածաշրջան[8]: Նշենք, որ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի կանոնադրության համաձայն, դա հնարավոր է միայն երկու կողմերի՝ Հայաստանի և Ադրբեջանի (Արցախի Հանրապետությունը միջազգայնորեն ՄԱԿ-ի կողմից ճանաչված չլինելու պատճառով չճանաչվեց որպես կողմ) համաձայնությամբ և Մինսկի խմբի համանախագահող պետությունների հետ խորհրդակցության միջոցով (նիստը թեև տեղի ունեցավ, բայց շոշափելի արդյունքի չհանգեցրեց[9]): ՅՈՒՆԵՍԿՕ-ի հայտարարության առանցքում կրկին Հաագայի կոնվենցիաներով և արձանագրություններով ստանձնած պարտավորությունների կատարման հորդորն է՝ վերջիններիս առանցքը հանդիսացող «յուրաքանչյուր ժողովրդի մշակութային արժեքներին հասցված վնասը ողջ մարդկությանն է ուղղված» սկզբունքով:

Այս հայտարարությունից մեկ ամիս անց ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի մշակույթի գծով օգնական Էռնեստո Օտտոնեն հայտարարեց. «Մինչ այժմ մի քանի անգամ դիմել ենք Ադրբեջանի իշխանություններին և անհաջողության մատնվել...»[10]: Իսկ ահա 2020 թ. դեկտեմբերի 21-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ն տարածեց մամուլի հաղորդագրություն, որտեղ ցավում էր, որ ԼՂ փորձագետների անկախ տեխնիկական առաքելություն ուղարկելու գործընթացը կանխվել է Ադրբեջանի կողմից[11]: Նշենք, որ պատերազմից 4 տարի անց էլ առաքելության ուղարկումը դեռ չի իրականացվել:

Առանձնակի կարևոր միջազգային փաստաթղթերի ցանկը 2020 թ. դեկտեմբերի 11-ին համալրվեց «Լեռնային Ղարաբաղի մշակութային արժեքների պաշտպանության վերաբերյալ» հռչակագրով[12], որն ընդունվել էր 1954 թ. Հաագայի կոնվենցիայի միջկառավարական կոմիտեի կողմից: Վերջինիս համաձայն՝ ժառանգության արժեքների՝ տեղում գնահատումը պետք է կատարվեր 1954 թ. Հաագայի կոնվենցիայի 23-րդ հոդվածով ՅՈՒՆԵՍԿՕ-ին տրված հատուկ մանդատի իրավական հիմքով:

2021 թ. նոյեմբերի 21-ին հուշարձանների պահպանման անհրաժեշտության մասին հայտարարությամբ հանդես եկավ Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովը՝ ընդգծելով այդ գործընթացում Ռուսաստանի օգնության պատրաստակամությունը, որը ներառում է նաև տարածաշրջան առաքելություն ուղարկելու համար ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի հետ բանակցությունների հանձնառությունը[13]: Անձամբ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը նույնպես ընդգծեց քրիստոնեական հնագույն կոթողի՝ Դադիվանքի պահպանման կարևորության մասին՝ Թուրքիայի նախագահ Էրդողանին ասելով, որ կրոնական և մշակութային վայրերի պահպանմանն առնչվող խնդիրները պետք է անհապաղ լուծվեն[14]:

---

[8] Nagorno-Karabakh: Reaffirming the obligation to protect cultural goods, UNESCO proposes sending a mission to the field to all parties, "UNESCO", 20 November 2020, https://en.unesco.org/news/nagorno-karabakh-reaffirming-obligation-protect-cultural-goods-unesco-proposes-sending-mission.

[9] Nikol Pashinyan, Emmanuel Macron, Charles Michel and Ilham Aliyev hold remote meeting, "The Prime Minister of the Republic of Armenia", 04 February 2022, https://www.primeminister.am/en/press-release/item/2022/02/04/Nikol-Pashinyan-video-conference/

[10] Nazaretyan H., Artsakh's Cultural Heritage Under Threat. "EVN Report", May 8, 2021, https://evnreport.com/spotlight-karabakh/artsakh-s-cultural-heritage-under-threat/.

[11] Ambartsumian Ye., Why Armenian Cultural Heritage Threatens Azerbaijan's Claims to Nagorno-Karabakh:"Hyperallergic", February 28, 2021, https://hyperallergic.com/614619/why-armenian-cultural-heritage-threatens-azerbaijans-claims-to-nagorno-karabakh/.

[12] Declaration of the Committee for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict of the Second Protocol to The Hague Convention of 1954 for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict – ensuring cultural property protection in and around Nagorno-Karabakh and setting-up an independent technical mission, 11 December 2020, https://en.unesco.org/sites/default/files/en_15_com_declaration_haut-karabakh_final_1.pdf

[13] Լավրովն ակնկալում է, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ն ակտիվ կլինի ԼՂ-ում մշակութային կոթողների պահպանման գործում, «Արմենպրես», 21-ը նոյեմբերի, 2020, https://armenpress.am/eng/news/1035561.html

[14] Nazaretyan H., Artsakh's Cultural Heritage Under Threat, "EVN Report", 8 May 2021, https://evnreport.com/spotlight-karabakh/artsakh-s-cultural-heritage-under-threat/

2. Միջազգային հանրության դիրքորոշման դրական փոփոխությունը

Պատերազմից գրեթե մեկ տարի անց գլոբալ անկայունության պայմաններում միջազգային հանրությունը պատմության մեջ եզակի ադեկվատությամբ սկսեց արձագանքել Լեռնային Ղարաբաղի և տարածաշրջանի մշակութային արժեքների ոչնչացման ադրբեջանական գործողություններին: Այս ընթացքում փորձ արվեց 44-օրյա պատերազմի ժամանակ մշակութային արժեքների ոչնչացումը կապել Ադրբեջանի կողմից Նախիջևանում իրականացված վանդալիզմի և արդեն 20-րդ դարասկզբին ձևավորված քաղաքականության հետ՝ առաջին անգամ հայատյացությունը համարելով 100-ամյա պետական քաղաքականություն: Միջազգային դերակատարներն Ադրբեջանի գործողությունները բնութագրեցին որպես ցեղասպանության շարունակություն և էթնիկ զտում:

Ի մասնավորի, Եվրոպական խորհրդարանը, ձայների 607 կողմ, 27 դեմ և 54 ձեռնպահ հարաբերակցությամբ, 2021 թ. ընդունեց հայ ռազմագերիների մասին բանաձև (N 2693)[15], որի 16-րդ կետը խստորեն դատապարտում է հայկական ժառանգության ոչնչացման ամեն մի գործողություն և կոչ անում Ադրբեջանին վերականգնել վնասված հուշարձանները:

2021 թ. հունիսի 27-28-ը Շվեյցարիայի կողմից Քրիստիան Լևրանտի նախագահությամբ Ֆրանկոֆոնիայի խորհրդարանական վեհաժողովի կրթության, հաղորդակցության և մշակութային հարցերի հանձնաժողովը Վալոնի Բրուքսելի դաշնային խորհրդարանի անունից Բրյուսելում ընդունել է հռչակագիր «Լեռնային Ղարաբաղում հայկական մշակութային և կրոնական ժառանգության պաշտպանության մասին»[16]: Հռչակագրի առանցքում Ֆրանկոֆոնիայի գրասենյակներին Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանում անկախ փորձագիտական առաքելության աշխատանքները կազմակերպելու առաջարկն էր:

Մեկ այլ կարևոր նախադեպ. 2021 թ. հուլիսի 2-ին Բրյուսելում աշխարհի շուրջ 90 խորհրդարաններ և միջխորհրդարանական կազմակերպություններ միավորող Ֆրանկոֆոնիայի խորհրդարանական վեհաժողովի կրթության, հաղորդակցության և մշակութային հարցերի կոմիտեն հանդես է եկել ժառանգությունը պաշտպանելու հանձնառությամբ:

2021 թ. սեպտեմբերի 27-ին Ստրասբուրգում ընդունվեց Լեռնային Ղարաբաղի հակամարտության հումանիտար հետևանքների վերաբերյալ ԵԽԽՎ բանաձևը (N 2391)[17], որով դատապարտվեց ոչ միայն 44-օրյա պատերազմի ընթացքում և դրանից հետո Ադրբեջանի կողմից իրականացվող մշակութային վանդալիզմի քաղաքականությունը, այլև առհասարակ վերջին 30 տարվա ընթացքում (սկզբնապես՝ Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունում) եկեղեցիների և գերեզմանատների ավերումը կամ վնասումը: Առաջին անգամ խորհրդարանական վեհաժողովն իր անհանգստությունների շրջանակն ընդլայնեց հայկական ժառանգությունը որպես «կովկասյան-աղվանական» ժառանգություն ներկայացնելու ադրբեջանական հորինվածքի մասին կասկածով[18]՝ հորդորելով ՅՈՒՆԵՍԿՕ-ին ուսումնասիրել ժառանգության օբյեկտիվ պատմությունը, ինչպես նաև տեղում գնահատել վնասը[19]: Ուշագրավ է, որ միջազգային փաստաթղթում խոսվում է բազմամշակութայնության ադրբեջանական կեղծ քարոզի մասին, որն ուղեկցվում է հայերի հանդեպ ամենաբարձր մակարդակով դրսևորվող անհանդուրժողականությամբ:

[15] European Parliament resolution on prisoners of war in the aftermath of the most recent conflict between Armenia and Azerbaijan (2021/2693(RSP)), "European Parliament", https://www.europarl.europa.eu/doceo/document/RC-9-2021-0277_EN.html.

[16] Assemblée parlementaire de la Francophonie, La Commission de l'éducation, de la communication et des affaires culturelles de l'APF s'engage en faveur de la protection du patrimoine culturel et religieux arménien dans le Haut-Karabagh, Bruxelles, le 2 juillet 2021, https://apf-francophonie.org/la-commission-de-l-education-de-la-communication-et-des-affaires-culturelles-de-l-apf-s-engage-en

[17] Council of Europe, Humanitarian consequences of the conflict between Armenia and Azerbaijan / Nagorno-Karabakh conflict, Resolution 2391 (2021), https://pace.coe.int/en/files/29483/html.

[18] Նույն տեղում, հոդված 18.4:

[19] Նույն տեղում, հոդված 18.5, 18.6:

ԵԽԽՎ հիշյալ բանաձևին հաջորդեց ՄԱԿ-ի Հաագայի (Նիդերլանդներ) արդարադատության միջազգային դատարանի՝ ընդդեմ Ադրբեջանի Հայաստանի հայցի հիման վրա 2021 թ. դեկտեմբերի 7-ին կայացրած որոշումը ՄԱԿ-ի 1965 թ. ընդունած «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիայի խախտումների վերաբերյալ՝ ժամանակավոր միջոցների կիրառման միջնորդությամբ: Դատարանը, քննելով Հայաստանի հայցը, հուշարձանների ոչնչացման փաստական տվյալներն ընդունել է որպես ռասայական խտրականության ապացույցներ[20]: Համաձայն միջանկյալ միջոցների կիրառման որոշման՝ Ադրբեջանը պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կանխելու հայ ազգային կամ էթնիկ ծագում ունեցող անձանց դեմ ռասայական ատելության և խտրականության հրահրումն ու խթանումը, ինչպես նաև պարտավորվում է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կանխելու և պատժելու վանդալիզմի ու պղծման գործողությունները հայկական մշակութային ժառանգության դեմ՝ ներառելով, բայց չսահմանափակվելով եկեղեցիներով և պաշտամունքի այլ վայրերով[21]: Սա միջազգային իրականության եզակի նախադեպ էր, քանզի դատարանը հայկական մշակութային ժառանգության ոչնչացումը չի դիտարկում որպես առանձին գործողություններ, այլ դա համարում է հայատյացության համակարգված, պետական մակարդակով ադրբեջանական իշխանությունների կողմից խրախուսվող քաղաքականություն, որը ներառում է նաև անմարդկային վերաբերմունքը, բռնության հերոսացումը և տարածքային պահանջատիրությունը ՀՀ-ի դեմ[22]:

ՄԱԿ-ի Հաագայի արդարադատության դատարանի որոշմանը 2022 թ. մարտի 10-ին հաջորդեց Եվրոպական խորհրդարանի լիագումար նստաշրջանին ձայների ճնշող մեծամասնությամբ ընդունված՝ «Լեռնային Ղարաբաղում մշակութային ժառանգության ոչնչացման մասին» (N 2582) բանաձևը[23], որտեղ կոչ է արվում Ադրբեջանին՝ ձեռնարկելու անհրաժեշտ քայլեր՝ կանխելու հայկական մշակութային ժառանգության ոչնչացման ու վանդալիզմի դեպքերը և պատժելու նման գործողություններ իրականացնողներին: Անդրադարձ է կատարվում նաև հայկական մշակութային կոթողների «աղվանացման» նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու ադրբեջանական կողմի որոշմանը: Բանաձևում ժառանգության ոչնչացումը կապվում է մարդու իրավունքների հետ՝ կարևորելով նաև ոչ նյութական արժեքների պաշտպանությունը:

Ուշագրավ է հատկապես այն հանգամանքը, որ բանաձևը 2020 թ. պատերազմի ժամանակ Ադրբեջանի կողմից հայկական մշակութային ժառանգությանը հասցված վնասը համարում է միտումնավոր և զգալի չափերի՝ շեշտադրելով, մասնավորապես, Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցու գնդակոծման, ավերման, գործառույթի փոփոխության փաստը, ինչպես նաև Մեխակավանի Զորավոր Սուրբ Աստվածածին ու Մատաղիսի Սուրբ Եղիշե եկեղեցիներին և Արցախի գերեզմանատներին հասցված վնասը:

Եվրախորհրդարանի բանաձևը հստակ կերպով արձանագրում է, որ Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանում հայկական մշակութային ժառանգության հետքի վերացումը կատարվում է ոչ միայն ոչնչացնելու, այլև պատմության կեղծման և կովկասյան-աղվանական ներկայացնելու փորձերի միջոցով՝ հիշեցնելով 2022 թ. փետրվարի 3-ին Ադրբեջանի մշակույթի նախարար Անար Քարիմովի կողմից հայկական կրոնական կառույցների արձանագրությունները վերացնելու համար աշխատան-

[20] Maghakyan S., Cultural Desecration Is Racial Discrimination, A recent International Court of Justice decision regarding Azerbaijan's actions in Nagorno-Karabakh could offer protection to threatened cultural heritage sites around the world, FP, 13 January 2022, https://foreignpolicy.com/2022/01/13/armenia-azerbaijan-nagorno-karabakh-cultural-desecration-is-racial-discrimination/ (մուտք՝ 06.07.2022):

[21] International Court of Justice, Application of the International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination (Armenia v. Azerbaijan), 7 December 2021, No. 2021/34:

[22] European Parliament resolution on the destruction of cultural heritage in Nagorno Karabakh (2022/2582(RSP)), հոդված 2.2:

[23] European Parliament Resolution of 10 March 2022 on the destruction of cultural heritage in Nagorno-Karabakh (2022/2582(RSP)), https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-9-2022-0080_EN.html

քային խմբի ստեղծման մասին:

Միջազգային արձագանքի առումով, հատկապես կարևոր է նշել, որ Ցեղասպանության կանխարգելման Լեմկինի ինստիտուտը ցեղասպանության կարմիր դրոշով 5 անգամ (2022 թ. օգոստոսի 15, 2022 թ. սեպտեմբերի 19, 2022 թ. հոկտեմբերի 7, 2023 թ. սեպտեմբերի 19, 2023 թ. սեպտեմբերի 22, 2023 թ. նոյեմբերի 1) ահազանգել է միջազգային կառույցներին և պետական մարմիններին՝ նշելով, որ Ադրբեջանը շարունակում է պետական մակարդակով քարոզել ատելության խոսք, կատարել վայրագություններ հայկական ինքնության դեմ, որոնք, որդեգրված լինելով 1915 թվականից՝ իբրև թուրք-ադրբեջանական ընդհանուր քաղաքականության բաղկացուցիչ մասեր, որակվում են որպես ցեղասպանական գործողություն[24]:

Միջազգային արձագանքի առումով, կարևոր է նաև Եվրոպական խորհրդարանում «Մշակույթի և միջազգային մշակութային հարաբերությունների նոր եվրոպական օրակարգը 2023-2026 թվականների համար» զեկույցը, որտեղ կարևորվել է ԼՂ մշակութային արժեքների պաշտպանությունը[25]:

3. Միջազգային հանրության արձագանքը մշակութային արժեքների պաշտպանությանը՝ Արցախի ամբողջական հայաթափումից հետո

2023 թվականի սեպտեմբերին Արցախի ամբողջական հայաթափումից հետո՝ հոկտեմբերի 12-ին Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովն ընդունեց «Հումանիտար իրավիճակը Լեռնային Ղարաբաղում» N 2517 բանաձևը[26], որտեղ խստորեն դատապարտեց 2023 թվականի սեպտեմբերի 19-ի Ադրբեջանի ռազմական գործողությունները և դրան նախորդած՝ Լաչինի միջանցքի արգելափակման հետևանքով ստեղծված ճգնաժամը՝ նշելով, որ դրանք ակնհայտորեն անտեսում են Արդարադատության միջազգային դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (2023 թվականի սեպտեմբերի 22) կողմից Ադրբեջանին ուղղված ժամանակավոր և միջանկյալ միջոցները: Վեհաժողովն իր 11-րդ հոդվածով հստակորեն արձանագրեց, որ տարածաշրջանի գրեթե ողջ հայ բնակչությունը (100,600) լքել է իր պապենական հայրենիքը և փախել Հայաստան՝ ֆիզիկական ոչնչացման վտանգի, Ադրբեջանի կառավարության երկարամյա հայատյաց քաղաքականության և վստահության բացակայության պատճառով: Բանաձևի 13-րդ կետում նշվում է, որ զանգվածային տեղահանությունը պատճառ է դարձել պնդումների և հիմնավոր կասկածների, որ դա կարող է հավասարվել էթնիկ զտումների, որոնք կարող են առաջացնել անհատական քրեական պատասխանատվություն՝ համաձայն միջազգային իրավունքի և Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրության: Վեհաժողովն իր ընդունած բանաձևի 17-րդ հոդվածով կոչ է արել պաշտպանել նաև մշակութային իրավունքները և տարածաշրջանի հայկական մշակութային ժառանգությունը: Բանաձևի 23-րդ կետում նշվում է, որ եթե Ադրբեջանը չկատարի իր պարտավորությունները, վեհաժողովն այլընտրանք չի ունենա, քան Նախարարների կոմիտեի և խորհրդարանական վեհաժողովի միջև լրացուցիչ համատեղ ընթացակարգ սկսել՝ վիճարկելու Ադրբեջանի պատվիրակության մանդատը 2024 թվականի առաջին նստաշրջանում:

Հաջորդիվ, Ավստրիայի խորհրդարանը Լեռնային Ղարաբաղի ժողովրդի դեմ Ադրբեջանի կողմից իրականացված էթնիկ զտումը դատապարտող բանաձև է ընդու-

[24] Lemkin Institute for Genocide Prevention, Red Flag Alert for Genocide - Azerbaijan in Armenia, November 1, 2023, https://www.lemkininstitute.com/red-flag-alerts/red-flag-alert-for-genocide---azerbaijan-in-armenia .

[25] European Parliament, Implementation of the European agenda for culture and of the EU strategy for international cultural relations, European Implementation Assessment, https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2022/734663/EPRS_STU(2022)734663_EN.pdf ; European Parliament, Statement by the Chair of the Delegation for relations with the South Caucasus, MEP Marina Kaljurand, on the military aggression of Azerbaijan against the Republic of Armenia, Strasbourg, 13 September 2022, https://www.europarl.europa.eu/cmsdata/253919/20220913_Azerbaijani%20military%20aggression_statement.pdf

[26] Council of Europe, Parliamentary Assembly, The humanitarian situation in Nagorno-Karabakh, Resolution 2517 (2023), https://pace.coe.int/en/files/33145/html

նել[27]: Այս ամենին հակառակ՝ 2023 թվականի նոյեմբերի 7-ին Փարիզում մեկնարկել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի 42-րդ գլխավոր կոնֆերանսը, որի փոխնախագահ է ընտրվել է Ադրբեջանը[28]. մի պետություն, որն ամենաշատն է խախտել ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցաներն ու սկզբունքները:

Հիշատակման է արժանի Ֆրանսիայի Սենատի բանաձևը, որն ընդունվել է 2024 թվականի հունվարի 17-ին՝ 336 կողմ և ընդամենը 1 դեմ ձայների հարաբերակցությամբ, որտեղ, ի թիվս այլ հրատապ խնդիրների, դատապարտվել է Լեռնային Ղարաբաղի մշակութային ժառանգության ոչնչացման Ադրբեջանի քաղաքականությունը[29]: Բանաձևում ընդգծվել է զինված հակամարտության դեպքում մշակութային արժեքների պաշտպանության միջկառավարական կոմիտեի օրակարգում Լեռնային Ղարաբաղի ժառանգության պաշտպանության հարցը ներառելու հրատապ անհրաժեշտությունը և կոչ է արվել հեռացնելու Ադրբեջանին այդ կոմիտեից: Իսկ 2024 թվականի հունվարի 24-ին Բրյուսելում՝ Եվրոպական խորհրդարանում, տեղի է ունեցել «Լեռնային Ղարաբաղի մշակութային և հոգևոր ժառանգության պաշտպանության» մասին համաժողովը՝ ԵԺԿ խմբակցության և պատգամավոր Միրիամ Լեքսմանի նախաձեռնությամբ[30]:

Բացի այդ, 2024 թվականի փետրվարի 28-ին Եվրոպական խորհրդարանն ընդունել է «Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության իրականացման վերաբերյալ 2023 թվականի հաշվետվությունը»[31] և «Անվտանգության և պաշտպանության միասնական քաղաքականության իրականացման տարեկան հաշվետվությունը»[32], որտեղ անդրադարձել է Լեռնային Ղարաբաղում հայկական մշակութային ժառանգության պաշտպանությանը և Ադրբեջանի դեմ կիրառվող պատժամիջոցների անհրաժեշտությանը: Ի մասնավորի՝ առաջին փաստաթուղթն իր 77-րդ կետով պահանջում է պաշտպանել հայկական մշակութային, պատմական և կրոնական ժառանգությունը Լեռնային Ղարաբաղում՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի չափանիշներին և Ադրբեջանի միջազգային պարտավորություններին համապատասխան: Իսկ մյուս հաշվետվությամբ Լեռնային Ղարաբաղի քաղաքացիական բնակչության վրա հարձակումները և դրա հետևանքները էթնիկ զտումներ է որակել: Եվրոպական խորհրդարանն իր այս զեկույցով կոչ է անում ԵՄ-ին պատժամիջոցներ կիրառել ադրբեջանական իշխանությունների դեմ՝ կասեցնելով էներգետիկ հուշագիրը:

Այս ամենին զուգահեռ, Եվրոպական խորհրդարանը 2024 թվականի մարտի 12-ին ընդունել է 2024/2580(RSP) բանաձև[33] ԵՄ-ի և Հայաստանի միջև ավելի սերտ կապերի և Ադրբեջանի ու Հայաստանի միջև խաղաղության համաձայնագրի անհրաժեշտության մասին, որի R.[34] կետով հաստատվում է, որ Լեռնային Ղարաբա-

[27] Ավստրիայում ՀՀ դեսպանություն, Ավստրիայի խորհրդարանի կողմից Լեռնային Ղարաբաղի ժողովրդի դեմ Ադրբեջանի իրականացրած էթնիկ զտումը դատապարտող բանաձևի ընդունում, 2023 թ. հոկ. 19, https://austria.mfa.am/hy/news/2023/10/19/ավստրիայի-խորհրդարանի-կողմից-լեռնային-ղարաբաղի-ժողովրդի-դեմ-ադրբեջանի-կողմից-իրականացված-էթնիկ-զտու/12228

[28] Azerbaijan at UNESCO, Telegram, 2023, November 7, https://t.me/zangezuravtonomia/47377?fbclid=IwAR3RG6rFlp50szmUQK-7KiX0jW3Mtq-mOnE_6VwmpCcGwINrxc4ohDeQTBxQ.

[29] Արևմտյան Հայաստանի պետական հեռուստատեսություն, The text of the resolution of the French Senate on Artsakh, հունվարի 17, 2024, https://westernarmeniatv.com/en/politics_wa/the-text-of-the-resolution-of-the-french-senate-on-artsakh/

[30] Բանախոսների շարքում էին միջազգային իրավունքի պրոֆեսոր Պիեռ դ'Աղժանը, Հոգեշնորհ Տ. Գարեգին վարդապետ Համբարձումյանը, մշակութային ժառանգության փորձագետ Արմինե Տիգրանյանը, Բելգիայում ՀՀ դեսպան/ԵՄ-ում ՀՀ ներկայացուցչության ղեկավար Տիգրան Բալայանը, «Եվրոպա Նոստրա» կազմակերպության գլխավոր քարտուղար Սնեժկա-Քուադվլիխ Միխայլովիչը (Speech by Armine Tigranyan in the European Parliament, 24.01.2024, https://www.youtube.com/watch?feature=shared&fbclid=IwAR2Thn7_muvOoJnL3KJxLs_YUFpXYcY53R1meS5AQ0iowjf-tw6OmwRD0Tg&v=MjJg-Zgq4guY:

[31] EU, European Parliament, Strasbourg, Resolution of 28 February 2024 on the implementation of the common foreign and security policy – annual report 2023, (2023/2117(INI), https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-9-2024-0104_EN.html.

[32] EU, European Parliament, Strasbourg, Resolution of 28 February 2024 'Implementation of the common security and defence policy – annual report 2023' (2023/2119(INI), https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-9-2024-0105_EN.html

[33] EU, European Parliament, Resolution on closer ties between the EU and Armenia and the need for a peace agreement between Azerbaijan and Armenia, 2024/2580(RSP), https://oeil.secure.europarl.europa.eu/oeil/popups/ficheprocedure.do?lang=en&reference=2024/2580(RS)

[34] agreement between Azerbaijan and Armenia, 12.3.2024 - (2024/2580(RSP)), https://www.europarl.europa.eu/doceo/document/RC-9-2024-0163_EN.html

ղում կան հայկական բազմաթիվ եկեղեցիներ, խաչքարեր և գերեզմանոցներ, որոնք 2020 թվականի պատերազմի ժամանակ և դրանից հետո Ադրբեջանի կողմից զգալի վնասի և ոչնչացման են ենթարկվել, իսկ պահպանման գործընթացը ձախողվել է:

Եզրակացություն: Այսպիսով՝ 2020 թ. սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 9 ընկած ժամանակահատվածում միջազգային հանրությունը համապատասխան գնահատական չի տվել Ադրբեջանի՝ հստակորեն ընդգծված մշակութասպան քաղաքականության դրսևորումներին և բավարարվել է երկու կողմերին ուղղված զսպվածության կոչերով: Սակայն, պատերազմից հետո՝ միջազգային անկայունության պայմաններում, Եվրոպայի խորհրդարանի մի շարք բանաձևերով և ՄԱԿ-ի Հաագայի արդարադատության միջազգային դատարանի որոշումներով ուրվագծվեց Ադրբեջանի գործողությունների դատապարտման և դրանց համապատասխան գնահատականներ տալու նոր հեռանկար: Եթե անգամ այդ արձագանքը կրկին ձևական է և կարողունակ չէ ստեղծելու ժառանգության պաշտպանության արդյունավետ կառուցակարգեր, այնուամենայնիվ, առաջին դեպքերից է, երբ փորձ արվեց կապելու 44-օրյա պատերազմի ընթացքում հայկական մշակութային արժեքների ոչնչացումն Ադրբեջանի կողմից Նախիջևանում իրականացված և 20-րդ դարասկզբին ձևավորված քաղաքականության հետ՝ հայատյացությունը միջազգայնորեն համարելով 100-ամյա պատմությամբ քաղաքականություն, ցեղասպանություն, խաղաղության օրակարգի չեզոքացում, բազմամշակութայնության խաթարում և համամարդկային արժեքներին հասցված ծանր հարված:

Իսկ 2023 թվականին արցախահայության բռնի տեղահանությունից հետո, երբ 120.000 մարդ զրկվեց իր հայրենիքից և իր մշակութային արժեքների հետ հաղորդակցման հնարավորությունից, միջազգային կազմակերպությունները վերստին բավարարվեցին չեզոք հայտարարություններով ու բռնի տեղահանվածների իրավունքների պաշտպանության կոչերով: Այդ նույն ընթացքում Ադրբեջանը, որն ամենաշատն էր խախտել ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիաներն ու ժառանգության պահպանության սկզբունքները, դարձավ դրա փոխնախագահող երկիր: Տարբեր եկեղեցիների ու գերեզմանոցների հիմնահատակ ավերումների հետ կապված՝ միջազգային հանրությունը լուռ մնաց: Բացառությամբ մի քանի ընդհանրական ձևակերպումների, Արցախի մշակութային արժեքների պաշտպանության խնդիրը հիմնականում աղճատված էր ներկայացվում, և որոշակի քայլերի բացակայության պատճառով եզակի արժեքների կորուստը շարունակվում է, ժառանգության միջազգային փաստագրումն ու ՅՈՒՆԵՍԿՕ-ի առաքելության ուղարկումը մինչ օրս չեն իրականացվել, ժառանգության կորուստը չի դադարել, իսկ Ադրբեջանը դեռևս չի դատապարտվել:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավստրիայում ՀՀ դեսպանություն, Ավստրիայի խորհրդարանի կողմից Լեռնային Ղարաբաղի ժողովրդի դեմ Ադրբեջանի կողմից իրականացված էթնիկ զտումը դատապարտող բանաձևի ընդունում, 2023 թ. հոկ. 19, https://austria.mfa.am/hy/news/2023/10/19/ավստրիայի-խորհրդարանի-կողմից-լեռնային-ղարաբաղի-ժողովրդի-դեմ-ադրբեջանի-կողմից-իրականացված-էթնիկ-զտում/12228
2. Արևմտյան Հայաստանի պետական հեռուստատեսություն, The text of the resolution of the French Senate on Artsakh, Հունվարի 17, 2024, https://westernarmeniatv.com/en/politics_wa/the-text-of-the-resolution-of-the-french-senate-on-artsakh/
3. Ժամակոչյան Ա., Աթանեսյան Ա., Հարությունյան Գ. և այլք, Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը, Եր, «Նորավանք» ԳԿՀ, 2009, էջ 21,

http://www.noravank.am/upload/pdf/book.pdf
4. Լավրովն ակնկալում է, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ն ակտիվ կլինի ԼՂ-ում մշակութային կոթողների պահպանման գործում, «Արմենպրես», 21-ը նոյեմբերի, 2020, https://armenpress.am/en/article/1035561
5. Տիգրանյան Ա., Արցախի մշակութային ժառանգության պահպանությունը. պաշտպանության մեխանիզմները ժառանգության պահպանության միջազգային համակարգում, «ՎԷՄ» մատենաշար, թիվ 7, 2023:
6. Ֆրանսիան պատրաստ է լիակատար աջակցել ԼՂ մշակութային և կրոնական ժառան¬գու-թյան պաշտպանությանը. Մակրոն, «Արմենպրես», 20-ը նոյեմբերի, 2020, https://armenpress.am/eng/news/1035424.html
7. Ambartsumian Ye., Why Armenian Cultural Heritage Threatens Azerbaijan's Claims to Nagorno-Karabakh:"Hyperallergic", February 28, 2021, https://hyperallergic.com/614619/why-armenian-cultural-heritage-threatens-azerbaijans-claims-to-nagorno-karabakh/
8. Assemblée parlementaire de la Francophonie, La Commission de l'éducation, de la communication et des affaires culturelles de l'APF s'engage en faveur de la protection du patrimoine culturel et religieux arménien dans le Haut-Karabagh, Bruxelles, le 2 juillet 2021, https://apf-francophonie.org/la-commission-de-l-education-de-la-communication-et-des-affaires-culturelles-de-l-apf-s-engage-en
9. Council of Europe, Humanitarian consequences of the conflict between Armenia and Azerbaijan / Nagorno-Karabakh conflict, Resolution 2391 (2021), https://pace.coe.int/en/files/29483/html.
10. Council of Europe, Parliamentary Assembly, The humanitarian situation in Nagorno-Karabakh, Resolution 2517 (2023), https://pace.coe.int/en/files/33145/html
11. Declaration of the Committee for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict of the Second Protocol to The Hague Convention of 1954 for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict – ensuring cultural property protection in and around Nagorno-Karabakh and setting-up an independent technical mission, 11 December 2020, https://en.unesco.org/sites/default/files/en_15_com_declaration_haut-karabakh_final_1.pdf
12. Dujarric S., Statement attributable to the Spokesman for the Secretary-General on the Nagorno-Karabakh conflict: https://www.un.org/sg/en/content/sg/statement/2023-08-02/statement-attributable-the-spokesperson-for-the-secretary-general-the-lachin-corridor-armenia-azerbaijan%C2%A0#:~:text=St%C3%A9phane%20Dujarric%2C%20Spokesman%20for%20the%20Secretary%2DGeneral&text=He%20urges%20both%20parties%20to,and%20security%20in%20the%20region
13. EU, European Parliament, Resolution on closer ties between the EU and Armenia and the need for a peace agreement between Azerbaijan and Armenia, 2024/2580(RSP), https://oeil.secure.europarl.europa.eu/oeil/popups/ficheprocedure.do?lang=en&reference=2024/2580(RS)
14. EU, European Parliament, Strasbourg, Resolution of 28 February 2024 on the implementation of the common foreign and security policy – annual report 2023, (2023/2117(INI), Texts adopted - Implementation of the common foreign and security policy – annual report 2023 - Wednesday, 28 February 2024 (europa.eu) .
15. EU, European Parliament, Strasbourg, Resolution of 28 February 2024 'Implementation of the common security and defence policy – annual report 2023 (2023/2119(INI), https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-9-2024-0105_EN.html
16. European Parliament Resolution of 10 March 2022 on the destruction of cultural heritage in Nagorno-Karabakh (2022/2582(RSP)), https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-9-2022-0080_EN.html
17. European Parliament resolution on prisoners of war in the aftermath of the most recent conflict between Armenia and Azerbaijan (2021/2693(RSP)), "European Parliament", https://www.europarl.europa.eu/doceo/document/RC-9-2021-0277_EN.html
18. European Parliament, Implementation of the European agenda for culture and of the EU strategy for international cultural relations, European Implementation Assessment, https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2022/734663/EPRS_STU(2022)734663_EN.pdf ; European Parliament
19. International Court of Justice, Application of the International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination (Armenia v. Azerbaijan), 7 December 2021, No. 2021/34:
20. Lemkin Institute for Genocide Prevention, Red Flag Alert for Genocide - Azerbaijan in Armenia, November 1, 2023, https://www.lemkininstitute.com/red-flag-alerts/red-flag-alert-for-genocide---azerbaijan-in-armenia
21. Maghakyan S., Cultural Desecration Is Racial Discrimination, A recent International Court of Justice decision regarding Azerbaijan's

actions in Nagorno-Karabakh could offer protection to threatened cultural heritage sites around the world, FP, 13 January 2022, https://foreignpolicy.com/2022/01/13/armenia-azerbaijan-nagorno-karabakh-cultural-desecration-is-racial-discrimination/ (մուտք՝ 06.07.2022)
22. Nagorno-Karabakh: Reaffirming the obligation to protect cultural goods, UNESCO proposes sending a mission to the field to all parties, "UNESCO", 20 November 2020, https://en.unesco.org/news/nagorno-karabakh-reaffirming-obligation-protect-cultural-goods-unesco-proposes-sending-mission
23. Nazaretyan H., Artsakh's Cultural Heritage Under Threat, "EVN Report", 8 May 2021, https://evnreport.com/spotlight-karabakh/artsakh-s-cultural-heritage-under-threat/.
24. Nikol Pashinyan, Emmanuel Macron, Charles Michel and Ilham Aliyev hold remote meeting, "The Prime Minister of the Republic of Armenia", 04 February 2022, https://www.primeminister.am/en/press-release/item/2022/02/04/Nikol-Pashinyan-video-conference/
25. Situation in the Nagorno-Karabakh conflict zone UNESCO statement, "UNESCO", 09 October 2020, https://en.unesco.org/news/situation-nagorno-karabakh-conflict-zone-unesco-statement
26. Speech by Armine Tigranyan in the European Parliament, 24.01.2024, https://www.youtube.com/watch?feature=shared&fbclid=IwAR2Thn7_muvOoJnL3KJxLs_YUFpXYcY53R1meS5AQ0iowjf-tw6OmwRD0Tg&v=MjJgZgq4guY
27. Statement by the Chair of the Delegation for relations with the South Caucasus, MEP Marina Kaljurand, on the military aggression of Azerbaijan against the Republic of Armenia, Strasbourg, 13 September 2022, https://www.europarl.europa.eu/cmsdata/253919/20220913_Azerbaijani%20military%20aggression_statement.pdf
28. Tigranyan A., EVN Report, 01.October, 2024, https://evnreport.com/spotlight-karabakh/destruction-of-armenian-cultural-heritage-of-artsakh/

Армине Тигранян
Младший исследователь Исследовательского центра «Амберд», АГЭУ

БЕЗОПАСНОСТЬ И ВЫЗОВЫ

ИСЧЕЗАЮЩЕЕ НАСЛЕДИЕ АРЦАХА И МОЛЧАНИЕ МИРА

В XXI веке, когда прогрессивный мир пропагандирует терпимость и уважение к культурному многообразию, призывая государства через официальные документы защищать культурное наследие всех народов, Азербайджан продолжает стирать с лица земли многочисленные ценности Арцаха, имеющие универсальное значение, тем самым обедняя культурное многообразие планеты. Начиная с военных действий 2020 года и в течение последних четырех лет, Азербайджан систематически уничтожает армянские церкви, исторические кладбища, хачкары и памятники.

В статье рассматривается реакция международного сообщества на государственную политику Азербайджана по уничтожению и присвоению культурного наследия Арцаха с 2020 года по сегодняшний день. Анализируются и оцениваются международные резолюции, декларации, парламентские заявления и судебные решения, касающиеся агрессивных действий Азербайджана, их осуждения и меры по защите армянского культурного наследия, оценивается их эффективность и значимость в сохранении и предотвращении разрушения исторических и культурных ценностей Арцаха. Анализ показывает, что, несмотря на стремление многих международных акторов остановить этот процесс вандализма, выражая жесткие осуждения действий Азербайджана, их молчание и отсутствие практических шагов косвенно "поощряют" подобное поведение, создавая почву для новых актов культурного геноцида.

Ключевые слова: *Арцах, международные организации, уничтожение культурного наследия, государственная политика Азербайджана, Совет Европы, ЮНЕСКО, Международный суд ООН в Гааге*

Armine TIGRANYAN
Junior Researcher at "Amberd" Research Center, ASUE

SECURITY AND CHALLENGES

ARTSAKH'S DISAPPEARING HERITAGE AND THE SILENCE OF THE WORLD

In the 21st century, as the progressive world promotes tolerance and respect for cultural diversity, urging states through written documents to safeguard the cultural heritage of all peoples, Azerbaijan continues to erase numerous values of universal significance in Artsakh, diminishing the cultural diversity of our planet. Since the military operations of 2020 and throughout the past four years, many Armenian churches, historical cemeteries, khachkars, and monuments have been systematically destroyed by Azerbaijan.

This paper examines the response of the international community to Azerbaijan's state policy of destruction and appropriation of Artsakh's cultural heritage from the 2020 war to the present. It analyzes and evaluates international resolutions, declarations, parliamentary statements, and judicial decisions addressing Azerbaijan's aggressive actions, condemning them, and advocating for the protection of Armenian heritage, assessing their effectiveness and significance in preserving and preventing the destruction of Artsakh's historical and cultural values. The analysis reveals that, despite many international actors attempting to prevent this ongoing vandalism by issuing strong condemnations of Azerbaijan's actions, their silence and lack of practical measures have indirectly "encouraged" this behavior, paving the way for further acts of cultural genocide.

Keywords: *Artsakh, international organizations, destruction of cultural heritage, Azerbaijan's state policy, Council of Europe, UNESCO, Hague International Court of Justice*